

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

9 նոյեմբերի 2016 թ.

N 234-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 268-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների ցանկը հաստատելու մասին» N 268-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 191-րդ, 192-րդ, 193-րդ, 194-րդ, 195-րդ, 196-րդ, 197-րդ, 198-րդ և 199-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ.

191.	Թռչունների կոլիբակտերիոզ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ԱնիՎակ Էշերիխիա կոլի (AniVac Escherichia coli) պատվաստանյութ	Գերմանիա	«ԱնիՎոն Լաբոր ԳմբՀ» կազմակերպություն
192.	Թռչունների ադենովիրուս վարակի նկատմամբ ակտիվազրկված ԱնիՎակ Ադենովիրուս (AniVac Adenovirus) պատվաստանյութ	Գերմանիա	«ԱնիՎոն Լաբոր ԳմբՀ» կազմակերպություն
193.	Թռչունների օրնիտոբակտերիում ռինտորալիտ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ԱնիՎակ ՕՌՏ (AniVac ORT) պատվաստանյութ	Գերմանիա	«ԱնիՎոն Լաբոր ԳմբՀ» կազմակերպություն
194.	Թռչունների սալմոնելոզ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ԱնիՎակ Սալմոնելլա (AniVac Salmonella) պատվաստանյութ	Գերմանիա	«ԱնիՎոն Լաբոր ԳմբՀ» կազմակերպություն
195.	Խոզերի հեմոֆիլոզային պոլիսերոզիտ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ԱնիՎակ Հպս (AniVac Hps) պատվաստանյութ	Գերմանիա	«ԱնիՎոն Լաբոր ԳմբՀ» կազմակերպություն
196.	Խոզերի զարգացող թոքաբորբ և պլևրիտ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ԱնիՎակ Ապպ (AniVac App) պատվաստանյութ	Գերմանիա	«ԱնիՎոն Լաբոր ԳմբՀ» կազմակերպություն
197.	Խոզերի ստրեպտոկոկոզ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ԱնիՎակ Ստրեպ սուիս (AniVac Strep suis) պատվաստանյութ	Գերմանիա	«ԱնիՎոն Լաբոր ԳմբՀ» կազմակերպություն
198.	Խոզերի 2-րդ տիպի ցիրկովիրուս հիվանդության նկատմամբ ակտիվազրկված, էմուլգացված Պորցիլիս ՊՍՎ ԻԴ (Porcilis PCV ID) պատվաստանյութ	Նիդերլանդներ	«Ինտերվետ Ինտերնեյշնլ Բ.Վ.» կազմակերպություն
199.	Խոզերի էնգոտիկ թոքաբորբ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված, էմուլգացված Պորցիլիս Մ Հայո ԻԴ ՈՒԱՆՍ (Porcilis M Hyo ID ONCE) պատվաստանյութ	Նիդերլանդներ	«Ինտերվետ Ինտերնեյշնլ Բ.Վ.» կազմակերպություն

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝

Ի. Առաքելյան